ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 հունվարի 2024 թվական, N 07-Ա

ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՏՎՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔ) ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջներով,Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով Ալավերդի համայնքի ղեկավարի 06.12.2023թ. N 1402-Ա, 27.09.2023թ. N 1139-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 21122023-06-0038 (գաղտնաբառ՝ 884REMJBZAQV), N 25122023-06-0079 (գաղտնաբառ՝ SQH74HBH7N1Q), վկայականները, հաշվի առնելով, որ կառույցներն իրականացրած անձանց կողմից ընդունվել են ուղղակի վաճառքով գնելու առաջարկը՝

համայնքի ավագանին **որոշում է.**

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 2/15 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 06.12.2023թ. N 1402-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 62.4 քմ արտաքին մակերեսով (54.6 քմ ներքին մակերեսով) ավտոտնակը և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.00624 հա բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0061-0066/ ուղղակի վաճառքով օտարել Արսեն Մարտունի Սարիբեկյանին:
   1) Ավտոտնակի համար մուծման վճարը կազմում է 64148 (վաթսունչորս հազար հարյուր քառասունութ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 1028 /հազար քսանութ/ ՀՀ դրամ):
   2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 49421 (քառասունինը հազար չորս հարյուր քսանմեկ) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 792 /յոթ հարյուր իննսուներկու/ ՀՀ դրամ):

2. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ալավերդի, գյուղ Աքորի, 4-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 3/6 հասցեում գտնվող, Ալավերդի համայնքի ղեկավարի 27.09.2023թ. N 1139-Ա որոշումով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 189.3 քմ արտաքին մակերեսով (157.1 քմ ներքին մակերեսով) պահեստը, պարիսպները և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0282 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-022-0038-0050/ ուղղակի վաճառքով օտարել Սուսաննա Զալիկոյի Պետրոսյանին:
   1) Շինությունների համար մուծման վճարը կազմում է 330897 (երեք հարյուր երեսուն հազար ութ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամ (1քմ-ի արժեքը՝ 1748 /հազար յոթ հարյուր քառասունութ/ ՀՀ դրամ):
   2) Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 145174 (հարյուր քառասունհինգ հազար հարյուր յոթանասուն չորս) ՀՀ դրամ (1 քմ-ի արժեքը՝ 514.8 /հինգ հարյուր տասնչորս ամբողջ ութ տասներորդական/ ՀՀ դրամ):
3. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ կառույցներն իրականացրած անձանց հետ կնքելու կառույցի և զբաղեցրած հողամասի ուղղակի վաճառքի պայմանագրեր:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			
3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			

10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ**